




Food and Agriculture Organization
of the United Nations

20
23



ՊԳԿ «ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ ՄՈՐԵՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՕՐԱՅՈՒՅՑ. ՄՈՐԵՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ



Մորեխների վերահսկողություն

Մորեխները կարող են զգալի վնաս հասցնել մշակաբույսերին եւ արոտավայրերին: Ուստի, մորեխների մասսայական բազմացումը զսպելու եւ մշակաբույսերի ու արոտավայրերի կորուստները նվազեցնելու նպատակով մորեխների դեմ իրականացվում են պայքարի միջոցառումներ: Մորեխների դեմ պայքարը հիմնականում իրականացվում է տարածված պեստիցիդներով: Մորեխների դեմ պայքարի աշխատանքներով զբաղվող մասնագիտացված խումբը տիրապետում է այդ թունավոր նյութերի արդյունավետ կիրառման եւ մարդու առողջության ու շրջակա միջավայրի վրա բացասական հետեւանքները նվազեցնելու գիտելիքներին ու հմտություններին, որը ներառում է նաեւ տեղաբնակների իրազեկում ծրագրավորված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Այսուհանդերձ, քանի դեռ օգտագործվում են սովորական պեստիցիդներ, մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա դրանց վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար պետք է ձեռնարկել նախազգուշական միջոցառումներ: Սույն օրացույցում ներկայացված են անվտանգության միջոցառումների վերաբերյալ գործնական խորհուրդներ, որոնք տեղի բնակչությունը, գյուղացիական տնտեսությունները, հովիվները, մեղվապահները եւ համայնքապետարանները պետք է ձեռնարկեն մորեխների դեմ պայքարի միջոցառումներից առաջ, ընթացքում եւ հետո:

2023

ՀՈՒՆՎԱՐ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
26	27	28	29	30	31	1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30	31	1	2	3	4	5

ՓԵՏՐՎԱՐ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
30	31	1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	1	2	3	4	5
6	7	8	9	10	1	12



Պահպանել հեռավորություն

Որպես կանոն՝ մորեխների դեմ պայքարի միջոցառումներն իրականացվում են գյուղերից, գյուղացիական տնտեսություններից կամ այլ բնակավայրերից հեռու վայրերում: Սակայն որոշ դեպքերում միջատասպան նյութերն անհրաժեշտ է կիրառել բնակավայրերի մերձակայքում: Թունաքիմիկատների կիրառման ընթացքում եւ դրանից անմիջապես հետո քիմիական նյութերով մշակված դաշտերին մոտենալ չի կարելի:

Զգուշացե՛ք: Ձեզ եւ ձեր ընտանիքին թունաքիմիկատների ազդեցության վտանգից զերծ պահե՛ք:

Հետեւե՛ք պայքարի աշխատանքներ իրականացնող խմբի եւ (կամ) տեղական մարմինների հրահանգներին: Հեռու մնացե՛ք միջատասպան նյութով մշակված տարածքից՝ դրանց կաթիլներով չվնասվելու համար: Պայքարի աշխատանքներ իրականացնող խմբի կամ տեղական պատկան մարմինների կողմից հրահանգ ստանալու դեպքում բրեզենտով ծածկեք գյուղի կամ տան մերձակայքի ջրհորները եւ խմելու ջրի ակունքները: Միջատասպան նյութի կիրառումից հետո առնվազն 48 ժամ մի՛ մտեք այդ դաշտերը:

2023

ՄԱՐՏ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
27	28	1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31	1	2
3	4	5	6	7	8	9

ԱՊՐԻԼ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
27	28	29	30	31	1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
1	2	3	4	5	6	7



Պահպանե՛ք սպասման ժամկետներ

Հաճախ մշակաբույսերի ցանքատարածություններում անհրաժեշտ է իրականացնել պայքարի աշխատանքներ մորեխների դեմ: Եթե ձեր դաշտը մշակվել է միջատասպան նյութով, ապա նախքան բերքը հավաքելը պետք է սպասեք նվազագույն քանակի օրեր: Սա կոչվում է նախաբերքահավաքային դադար կամ սպասման ժամկետ: Այն պահպանելու դեպքում բերքի մեջ միջատասպան նյութի մնացորդային քանակությունները սպառողների համար որևէ վտանգ չեն ներկայացնի:

Մորեխների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնող խմբի կամ գյուղատնտեսության հարցերով խորհրդատուները կարող են նշել սպասման ժամկետի տեւողությունը, որը տարբեր պեստիցիդների համար տարբեր է:

Ապահովե՛ք մեր սննդամթերքի անվտանգությունը. պահպանե՛ք սպասման ժամկետները:

2023

ՄԱՅԻՍ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30	31	1	2	3	4
5	6	7	8	9	10	1

ՀՈՒՆԻՍ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
29	30	31	1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	1	2
3	4	5	6	7	8	9



Պահպանե՛ք գյուղատնտեսական կենդանիների արածեցման արգելքի շրջանը

Մորեխների դեմ պայքարի միջոցառումները հաճախ անց են կացվում արոտավայրերում: Եթե ձեր գյուղատնտեսական կենդանիները միջատասպան նյութով մշակված արոտավայրերում կամ մոտակա տարածքում են արածում, ապա պետք է նվազագույն քանակի օր սպասե՞ք՝ նախքան կենդանիներին այդ հողատարածք մտնել թույլատրելը: Սա կոչվում է արածեցման արգելքի շրջան, որը պահպանելու դեպքում խոտի վրա պեստիցիդների մնացորդային քանակությունը ձեր կենդանիների, ինչպես նաև նրանց կաթը կամ միսը սպառողների համար վտանգ չեն ներկայացնի:

Մորեխների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնող խմբի կամ գյուղատնտեսության հարցերով խորհրդատուները կարող են նշել արածեցման արգելքի ժամկետի տևողությունը, որը տարբեր պեստիցիդների համար տարբեր է:

Ապահովե՛ք մեր սննդամթերքի անվտանգությունը. պահպանե՛ք արածեցման արգելքի շրջանը:

2023

ՀՈՒԼԻՍ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
26	27	28	29	30	1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
31	1	2	3	4	5	6

ՕԳՈՍՏՈՍ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
31	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31	1	2	3
4	5	6	7	8	9	10



Պեստիցիդների դատարկ տարաները մի՛ օգտագործեք

Պեստիցիդների դատարկ տարաները կարող են մթերքներ, ձիթայուղ կամ խմելու ջուր պահելու համար հարմար թվալ: Սակայն նույնիսկ մաքրելուց հետո պեստիցիդների մնացորդները մշտապես առկա կլինեն տարայում: Հետևաբար, պեստիցիդների դատարկ տարաներում մթերք կամ ըմպելիք պահելը վտանգավոր է ձեր առողջության համար: Հավատ մի՛ ընծայեք նրանց, ովքեր ասում են, թե պեստիցիդների դատարկ տարաները կարելի է մաքրել այնպես, որ պիտանի լինեն հետագա օգտագործման համար: Դա անհնար է: Երբեք կրկին մի՛ օգտագործեք դրանք:

Ձեր տան կամ դաշտի շրջակայքում պեստիցիդների դատարկ տարա գտնելու դեպքում հանձնեք Գյուղատնտեսության նախարարության ձեր տարածքային մարմնին՝ այն ճիշտ կերպով խոտանելու նպատակով:

2023

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
28	29	30	31	1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	1
2	3	4	5	6	7	8

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
25	26	27	28	29	30	1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23	24	25	26	27	28	29
30	31	1	2	3	4	5



Պաշտպանե՛ք մեղուներին

Մորեխների դեմ օգտագործվող սովորական քիմիական միջատասպան նյութերը թունավոր են մեղուների համար: Ուստի շատ կարևոր է դաշտը մշակելուց առաջ հեռացնել այնտեղ տեղադրված մեղվափեթակները, հատկապես բույսերի ծաղկման շրջանում: 3-ից 5 կիլոմետրը, սովորաբար, անվտանգ հեռավորություն է համարվում: Ձեր մեղուներին պեստիցիդներով մշակված դաշտերին մոտ բերելու համար պետք է առնվազն մեկ շաբաթ սպասել:

Եթե դուք մեղվապահ եք, ապա անպայման հետեւե՛ք մորեխների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնող խմբի կամ գյուղատնտեսության հարցերով խորհրդատուների ցուցումներին: Եթե տեսնում եք, որ ձեր մերձակայքում մորեխների դեմ պայքարի միջոցառումներ են իրականացվում, կապ հաստատեք մորեխների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնող խմբի կամ տեղական մարմինների հետ՝ պարզելու մեղվափեթակները տեղափոխելու անհրաժեշտության մասին:

Մեղուները կարևոր դեր ունեն մշակաբույսերի փոշոտման եւ մեղրի արտադրության գործում. պահպանե՛ք նրանց միջատասպան նյութերի ազդեցությունից:

2023

ՆՈՅԵՄԲԵՐ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
30	31	1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	1	2	3

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրբ	Շբթ	Կիր
27	28	29	30	1	2	3
4	5	6	7	8	9	10
11	12	13	14	15	16	17
18	19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30	31

Յոտային եւ ոչ հոտային մորեխները լրջագույն սպառնալիք են գյուղատնտեսության համար, քանի որ հարձակվում են մշակովի եւ վայրի բույսերի բոլոր տեսակների վրա: Դրանց դեմ պայքարի լավագույն ռազմավարությունը կանխարգելումն է: Սա նշանակում է մորեխների բազմացման արեալների մշտադիտարկում նրանց կենսափուլի առավել խոցելի ժամանակաշրջաններում՝ ներխուժումները վաղ հայտնաբերելու եւ արագ արձագանքելու նպատակով: Այդուհետ վերահսկողական միջոցառումները կարելի է ձեռնարկել նախքան մորեխների քանակի ավելացումը եւ այն ժամանակ, երբ մշակվող դաշտերին դեռեւս որեւէ անմիջական վտանգ չի սպառնում:

Ներկայում մորեխների դեմ պայքարի միջոցառումները հիմնականում իրականացվում են թունաքիմիկատների միջոցով: Մորեխների դեմ պայքարի աշխատանքներով զբաղվող մասնագետները վերապատրաստվում են, որպեսզի պայքարի աշխատանքներ իրականացնելիս բացառվի կամ նվազեցվի մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունը: Մորեխների դեմ պայքարում աստիճանաբար ավելանում է ցածր ռիսկ ներկայացնող միջատասպանների կիրառումը, ինչպիսիք են միջատների աճի կարգավորիչները, ինչպես օրինակ խիտինի ինհիբիտորները եւ կենսապատրաստուկները, որոնք միայն մորեխների վրա են ազդում՝ առանց վնաս հասցնելու այլ օրգանիզմների: Արդյունքում մորեխների վերահսկողությունը բնապահպանական տեսանկյունից առավել անվտանգ է դառնում:

ՊԳԿ-ն աջակցում է Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրներին՝ իրականացնելու մորեխների կանխարգելում, ինչպես նաեւ դրանց դեմ պայքարի այնպիսի միջոցառումներ, որոնք մարդու առողջության եւ բնապահպանական տեսանկյունից անվտանգ են:

Այս օրացույցը, որը հիմնականում երաբերվում է մորեխներով վարակված վայրերում ապրող բնակչության կողմից կիրառվելիք անվտանգության միջոցառումներին, պատրաստել է Միավորված ազգերի կազմակերպության Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ)՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսական աջակցությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

